ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝ 098777709,
էլ. փոստ՝ khachpar.gyughapetaran@mail.r

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» ապրիլի 2013 թվականի № 9

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի պահանջներով՝ ավագանին որոշում է.

Թույլատրել Արարատի մարզպետարանին օգտվելու Խաչփար համայնքի դպրոցի ջեռուցման համակարգի և գազատարի կառուցման շինարարական աշխատանքների կատարման նպատակով շինարարության թույլտվություն ստանալու համար նախատեսված տեղական տուրքի՝ 7500 (յոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ արտոնությունից՝ վճարելով նրա փոխարեն համայնքի բյուջեից:

Կողմ(5) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ	ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՍԵՐԳԵՅ	ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՏԻԳՐԱՆ	ԵՍԱՅԱՆ
ՏԻԳՐԱՆ	ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԷԴԻԿ	ՆԱՂԴԱԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝ 098777709,
էլ. փոստ՝ khachpar.gyughapetaran@mail.r

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» ապրիլի 2013 թվականի № 10-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի «2013 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ «ԾԻԾԵՌՆԱԿ» ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ -Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» № 38-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի պահանջներով՝ ավագանին որոշում է.

Համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 17-ի «2013 թվականի համար գյուղապետարանի աշխատակազմի և «Ծիծեռնակ» մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ -ի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և դրույքաչափերը հաստատելու մասին» № 38-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

Հավելված 1-ում աշխատակազմի քարտուղարի և համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնային դրույքաչափի սյունակի «110.0» թիվը փոխարինել «120.0» թվով:

Կողմ(5) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԷԴԻԿ ՆԱՐԳԻԶՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.gyughapetaran@mail.r

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» ապրիլի 2013 թվականի № 11-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի,«Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի,«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի պահանջներով՝ ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Խաչփար համայնքի 2013 թվականի բյուջեի հետևյալ փոփոխությունը.

Համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագրի 4891 հոդվածից պակասեցնել 100.0 հազար դրամ՝ այն ավելացնելով վարչական բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում» գործառական դասակարգման 01.1.1 ծրագրի 4214 «Կապի ծառայություններ» հոդվածին:

Կողմ(5) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԷԴԻԿ ՆԱՂԴԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ